# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | Ախտահանիչ ալկիլ դիմեթիլբենզիլամոնիում (ԱԴԱՔ) քլորիդ 3 %, դիդեցիլդիմեթիլամոնիում (ԴԴԱՔ) քլորիդ 6% | Դիաբակ | Դիաբակ | Ինտերսեն պլյուս | <<Դիաբակ>> - Հակաբակտերիալ հեղուկ լվացող միջոց հանդիսացող խտանյութ է, պիտանելիության ժամկետը` 3-5 տարի, աշխատանքային պատրաստի լուծույթը պիտանի է 10 - 14 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ 11%: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում` |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տուբերկուլոզի հարուցիչների, ներիիվանդանոցային և հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, սիբիրյան խոց), Կանդիդա տեսակի սնկերի, դերմատոֆիտերի և բորբոսասնկերի, վիրուսների (այդ թվում՝ գրիպի, ներառյալ Ա թռչնի գրիպ H5N1, պոլիոմիելիտի, հեպատիտ Բ-ի, մարդու իմունային անբավարարության վիրուսի): Միջոցն օժտված է լվացող հատկություններով, չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գունաթափում հյուսվածքները, չի ֆիքսում օրգանական աղտոտվածությունը: Միջոցը ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները ցանկացած տեսակի մակերեսներից (ապակի, հայելիներ, մետաղ, կերամիկա, գորգ, կաշի, քրոմապատ արտադրատեսակներ, բետոն, սալիկ, ռետին, պլաստիկ, վինիլ, ճենապակի, հախճապակի և այլ, այդ թվում՝ ծակոտկեն): |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ախտահանիչ միջոցը նախատեսված է կուվեզների և դրանց հարմարանքների ախտահանման համար, շնչական ապարատների և հարմարանքների (այդ թվում՝ անեսթեզիոլոգիական խողովակների), ատամնաբուժության մեջ կիրառվող ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիեթերային խեժից պատրաստված ատամնաբուժական արտատպվածքների, մետաղներից, կերամիկայից, պլաստմասե և այլ նյութերից ատամնապրոթեզային կաղապարների, արտիկուլյատորների, թքարտածծիչների և արտածծիչ հարմարանքների ախտահանման և լվացման համար, բժշկական նշանակության իրերի (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող, գործիքներ, ճկուն և կոշտ էնդոսկոպներ և դրանց համար նախատեսված գործիքներ) ախտահանման և նախամանրէազերծային մաքրման (այդ թվում՝ ախտահանման հետ համակցված) համար: Ունի ՀՀ ԱՆ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1792-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2026/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | | |